# Օգոստոսի 9-ը ֆիզկուլտուրնիկի Օրն է

## Սրտանց շնորհավորում ենք ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառի, սպորտային կազմակերպությունների և համալիրների աշխատողներին, բոլոր սպորտասերներին ավանդական դարձած համաժողովրդական տոնի՝ ֆիզկուլտուրնիկի Օրվա առթիվ:

Ամեն տարի օգոստոսի երկրորդ շաբաթ օրը վառ տոն է բոլոր նրանց համար, ովքեր ակտիվորեն կատարում են ֆիզիկական վարժություններ, կոփում և ամրապնդում են իրենց մարմինը և ոգին, ովքեր սիրում են սիստեմատիկաբար զբաղվել սպորտով, օգնում են պատրաստել ու դաստիարակել առաջատար մարզիկներ, մեծ ցանկությամբ թիմեր են կազմում և հաճույքով մասնակցում տարբեր տեսակի ու մակարդակի մրցումների:

Ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացումը մեր երկրում կարևոր համապետական խնդիր է, որի լուծումը անմիջականորեն կապված է մարդկանց առողջության բարելավման և աճող սերնդի հաջող դաստիարակության հետ:

Ֆիզկուլտուրան և սպորտը Մյասնիկյանի շրջանի բնակիչների կյանքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում և լայն մասսայականություն վայելում: Այդ բնագավառի գործունեության զարգացումը նախատեսված է կոնկրետ ծրագրերով, որոնք հաջողությամբ իրագվում են: Շրջանում շատ բան է արվում, որպեսզի յուրաքանչյուր բնակիչ սպորտով զբաղվելու հնարավորություն ունենա, առողջ կենսաձև ու պատշաճ հասարակական վարմունք ցուցաբերի, որպեսզի սպորտը դառնա ավելի մասսայական և հանդիսատեսային բնույթ ստանա: Արված աշխատանքի արդյունքն է մեր առաջատար մարզիկների հաջող ելույթը ոչ միայն մարզային ու համառուսաստանյան, այլև միջազգային մրցումներում: Մյասնիկյանցիները ակտիվություն են ցուցաբերում սպորտային տոների անցկացման ժամանակ, տարեցտարի ավելանում է սիստեմատիկաբար ֆիզկուլտուրայով ու սպորտով զբաղվողների թիվը:

Առաջիկա սպորտային-առողջարարական միջոցառումներում նույնպես լավ արդյունքի հասնելու համար մենք պարտավոր ենք լրջորեն նախապատրաստվել: Միայն այդ դեպքում սպորտային պարապմունքները կգտնեն իսկական կողմնակիցներ, և մեր մարզիկները նեկ կուրախացնեն մեծ հաջողություններով:

Սիրելի հայրենակիցներ, ձեզ ամենքիդ սրտանց մաղթում ենք ամուր առողջություն, լավ ֆիզիկական վիճակ: Իսկ մեր սպորտսմեններին ցանկանում ենք ուժ, եռանդ, անկոտրում կամք և նորանոր փայլուն հաղթանակներ:

*Նկարներում՝ սպորտի վետերան Գասպար Քիլաֆյանը (մեջտեղում) շնորհավորում է "Պրոտո" թիմի ղեկավար Եղիա Ծոեյանին (աջից) "Գորոդկի" խաղի մրցումներում հաղթելու համար և գլխավոր մրցավար Խաչերես Փուդեյանի հետ պարգևներ հանձնում նրան. պահեր տարբեր տեսակի սպորտային մրցումներից:*

Լուսանկարները՝ Արտաշես ՄԻՐՈՒՔՅԱՆԻ











